

**Գիտական նստաշրջան՝ նվիրված  
հայ մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյա հոբելյանին**

2017թ. նոյեմբերի 3-ին ՀՀ ԳԱԱ Նախագահության նիստերի դահլիճում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը՝ ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ գումարեց «Հովհաննես Այվազովսկի – 200» գիտական նստաշրջանը: Հայ իրականության մեջ առաջին անգամ մի ամբողջ գիտական նստաշրջան՝ տասնչորս զեկուցում, նվիրվեց բացառապես մեծ ծովանկարչի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությանը:

Գիտական նստաշրջանին ընդառաջ՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հայկական հիմնադրամի աջակցությամբ լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի «Ծովով հափշտակվածը. Հովհաննես Այվազովսկի» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) աշխատությունը:

Բացման խոսքով հանդես եկավ **Արարատ Աղասյանը**:

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը**:

Իհարկե, Հ.Այվազովսկու մասին դեռևս իր կյանքի օրոք և հետագայում գրվել է ծով գրականություն, բազմաթիվ ուսումնասիրություններ, և թվում է, թե արդեն ամեն ինչ ասվել է ու գրվել, նորություն ասելը գրեթե անհնար է: Սակայն նշված գիտական նստաշրջանում եղան հայտնություններ, նորություններ:

Գաղտնիք չէ, թե մեծ նկարիչն ինչ ազդեցություն է թողել XIX դարի ռուսական և հայկական կերպարվեստի ներկայացուցիչներից շատերի վրա: **Արարատ Աղասյանի** «Հովհաննես Այվազովսկու իտալացի սանը. Գաբրիելո Բարտոլոմեո Կասեսսի» զեկուցումից պարզ դարձավ, որ մեծահամբավ նկարիչը նկատելի ազդեցություն է թողել նաև եվրոպացի առանձին վարպետների ստեղծագործության վրա: Բանն այն է, որ Այվազովսկու՝ սեփական արվեստանոցին առընթեր 1865-ին բացված «Համընդհանուր աշխատանոց» կոչված կրթարանում, առավելապես ամռան ամիսներին, սովորել ու ստեղծագործական փորձ են ձեռք բերել ոչ միայն Գրիմում ծնված, այնտեղ բնակվող սկսնակ և ուսյալ արվեստագետները (ինչպես, օրինակ, Ադուֆ Ֆեսսլերը, Էմանուել Մահտեսյանը կամ Կոնստանտին Բոգալսկին), այլև Ռուսաստանի տարբեր ծայրերից ու արտասահմանից Թեոդոսիա եկած նկարիչները, որոնցից էր նաև Գաբրիելո Բարտոլոմեո Կասեսսին: Ծուրջ հինգ տարի՝ մինչև 1883 թվականը, աշխատելով Այվազովսկու արվեստանոցում, նա ստեղծել է մի շարք ծովային և առափնյա բնանկարներ, որոնք թե՛ մոտիվների ընտրությամբ, թե՛ կոմպոզիցիոն դասավորությամբ նմանվում են Այվազովսկու աշխատանքներին: Ա.Աղասյանը համեմատեց Կասեսսիի «Նավաբեկություն», «Փարոս», «Գիշեր: Վեզուվի ժայթքումը», «Մրրկալից ջրեր», Օդեսայի արևմտյան և արևելյան արվեստի թանգարանում ցուցադրվող «Կոստանդնուպոլիսը գիշերով» յուղաներկ կտավները և Այվազովսկու «Ծովափը գիշերով: Փարոսի մոտ», «Կոստանդնուպոլիսը լուսնյակ գիշերով», «Փոթորիկ ծովում: Գիշեր», «Վեզուվի տեսարանը գիշերով», «Փոթորիկ Այա հրվանդանի մոտ» հայտնի ստեղծագործությունները: «Իր ուսուցիչի նման,- նշեց Ա.Աղասյանը,- Կասեսսին ևս ձգտում է բնությունն ու ծովը ներկայացնել կենդանի շարժման և փոփոխության մեջ՝ մերթ հանդարտության, անդորրի պահին, մերթ ահեղ, անսասնա տարերքի տեսքով: Ծովի ու երկնքի լայնարձակ, ազատ տարածությունները պատկերող նրա աշխատանքները ևս աչքի են ընկնում բնության կենդանի ընկալումներով ու ռոմանտիկ տրամադրությամբ, թեպետև չունեն Այվազովսկու ծովանկարներին հատուկ թարմությունն ու թեթևությունը, իսկ տեխնիկական վարպետությամբ և գեղարվեստական որակով, անշուշտ, զիջում են Այվազովսկու համանման կտավներին: Վերջինիս պես, Կասեսսին ևս իր նկարներն ավարտում էր արվեստանոցային պայմաններում, հաճախ էր

անդրադառնում գիշերային տեսարաններին, փոթորկոտ ծովի կերպարին ու նավաբեկության մոտիվին: 1880 թվականին, երբ Այվազովսկին Թեոդոսիայում, սեփական առանձնատանն ու աշխատանոցին կից հանրային պատկերասրահ բացեց, նա մշտական ցուցադրության մեջ ընդգրկեց նաև իր արվեստագետ ընկերների ու հետևորդների աշխատանքները, որոնցից մի քանիսը Կասեսսիի նկարներն էին»:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Հենրիկ Հովհաննիսյանը** «Հովհաննես Այվազովսկին պոետական ներշնչումներում (Պ. Ադամյան, Հովհ. Թումանյան)» գեկուցման մեջ նկատեց, որ ռոմանտիկ դերասան Պետրոս Ադամյանը Այվազովսկու արվեստի լույսով է դիտել ծովը փոթորկից առաջ: Դա արտահայտվել է նրա մի բանաստեղծության մեջ և ներդաշնակել է իր խաղային վարքագծին Համլետի դերում՝ հուզական պոռթկումի եզրին, կուլմինանտը հետաձգելով: «Նրա խաղում,- նշեց բանախոսը,- տեսել են ճշմարիտ հույզեր և կրքերի ռոմանտիկա, այն, ինչ հատուկ է եղել Այվազովսկու արվեստին՝ նյութականության պատրանք և բնության տարերքի իդեալականացում: Իր բանաստեղծության մեջ Ադամյանը գույները դիտում է որպես բնության նյութական տարրեր և խորհրդակերպում է որպես զգայումի կերպաձևեր՝ ռեալիզմ և ռոմանտիզմ միաժամանակ, այն է՝ անդրանցում: Այվազովսկու արվեստի այս հատկանիշներն են ներշնչել Հովհաննես Թումանյանին իր երկու բանաստեղծություններում: Առաջին դեպքում նա բացարձակ ռոմանտիկ է՝ դիմում է բառերի պատկերային ուժգնությանը, խտացնում գույները, ստեղծում խոսքային հզոր ու ծանր կտավ, փոքր ծավալով տիեզերքն ամփոփող, երկրորդ դեպքում («Մի հառաչանք») հնայվում է պատկերի վեհությամբ ու տրվում վեհությունից ծնվող կարոտի զգացումին:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Ալիս Ներսիսյանը** «Երկու աշխարհների կիզակետում՝ Հովհաննես Այվազովսկի» գեկուցման մեջ նկատեց, որ ազգությամբ հայ Հ.Այվազովսկին XIX դարի ռուս մշակույթի անվանի ներկայացուցիչներից էր, ում ստեղծագործական և հասարակական կյանքը բազում թելերով կապված էր Ռուսաստանի հետ: «Բայց Այվազովսկին ուներ և իր բուն հայրենիքը, նա հայ ժողովրդի զավակն էր: Այվազովսկու կտավներից շատերը նվիրված են Հայաստանի և հայ ժողովրդի պատմությանը: Նկարչի միջոցներով հրատարակվել են հայ պատմաբաններից ոմանց աշխատությունները: Նա անձնական և նամակագրական սերտ կապեր ուներ հայ մտավորականներից շատերի, հայության ճանաչված ներկայացուցիչների հետ, հայրենակիցների հանդեպ բարոյական և նյութական մեծ աջակցություն էր ցուցաբերում: Հայերը և Հայաստանը մեծանուն նկարչի համար հանդիսանում էին իր ներքին, հոգևոր կյանքի հիմքը, մինչդեռ Ռուսաստանը և ռուսական մշակույթը՝ իր արտաքին հաջողակ կյանքի ձեռքբերումներն արտացոլող հայելիներ էին»,- նշեց բանախոսը:

«Հովհաննես Այվազովսկին և Ուիլյամ Թյորները» գեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու **Մարգարիտա Քամալյանը** նկատեց, որ հայազգի մեծանուն նկարչի գնահատողներից մեկը դարձավ անգլիացի մեծանուն ծովանկարիչ, Մեծ Բրիտանիայի Թագավորական ակադեմիայի անդամ Ուիլյամ Թյորները: Նրանց հանդիպումը պատահական էր. 1842 թվականին Հռոմում Այվազովսկու ցուցահանդեսի ժամանակ Թյորները տեսնում է Այվազովսկու «Նեապոլյան ծովածոցը լուսնյակ գիշերին» բնանկարը: Սակավախոս, մենակյաց, ինտելեկտուալ, արտահայտությունների մեջ ուղղախոս և կտրուկ, քչերի արվեստին հավանություն տվող անգլիացի նկարիչը իտալերեն լեզվով գրված գովաբանական բանաստեղծության մեջ իր անկեղծ և հիացական խոսքերն է հղում Այվազովսկուն:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր **Արա Հակոբյանի** «Հովհաննես Այվազովսկին որպես բնության քննախույզ» գեկուցման նպատակն էր իրազեկել, որ «Այվազովսկի» երևույթի ձևավորման ամենակարևոր շրջանը,

որն ուղենշային դարձավ նրա հետագա ողջ գործունեության համար, երիտասարդական տարիների ստեղծագործական որոնումներն էին: Այվագովսկին մշակեց բնության նկատմամբ միանգամայն նոր մոտեցում, որը բացակայում էր ժամանակակից ուսումնական դասընթացներում: Խոսքը էտյուդային նախասիրություններից եկող, բնության գրկում բացօդյա քննախույզ պրատումների, փոփոխվող լուսաօդային միջավայրի արտացոլման մասին է և այդ ամենը՝ արագ, առաջին վրձնահարվածների (առանց լրացուցիչ ուղղումների ու մշակման) միջոցով: Փաստորեն Բարբիզոնցիների անկախ Հ.Այվագովսկին անում էր այն, ինչին նվիրվել էին ֆրանսիական կերպարվեստի նորարար մեծերը՝ Թեոդոր Ռուսոն, Ժյուլ Դյուպրեն, Նարցիս Դիագր և այլք:

Նստաշրջանի առաջին նիստը եզրափակեց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանի** «Հովհաննես Այվագովսկին և Միխայիլ Գլինկան» զեկուցումը: Հանճարեղ ծովանկարչին և ռուսական ազգային օպերայի հիմնադրին ծանոթացրել էր նկարիչ Կառլ Բրյուլովը 1839 թ.: Այդ ժամանակ Գլինկան աշխատում էր «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայի վրա: Ժամանակակիցների վկայությամբ Այվագովսկին լավ ջութակ էր նվագում, քեմանիի (քյամանի) ոճով՝ ծնկին դրած: Հիմնականում նվագում էր Դրիմի թաթարների ժողովրդական մեղեդիներ, որոնցից երեքը Գլինկան օգտագործել է «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայում. երկուսը՝ լեզգիներին, իսկ երրորդ մեղեդին՝ օպերայի երրորդ գործողությունից Andante-ում, Լյուդմիլայի ձեռքը խնդրող հերոսներից մեկի խազարների խան՝ Ռատմիրին բնութագրելիս:

Նստաշրջանի երկրորդ նիստն սկսվեց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Գարեգին Քոբանջյանի** «Հովհաննես Այվագովսկու գեղարվեստական լեզվի ձևավորման գործոնները» բանախոսությամբ:

«Հովհաննես Այվագովսկին և Վարդգես Սուրենյանցը» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մանե Մկրտչյան** նկատեց, որ 1860-ականների վերջին մանուկ Վարդգես Սուրենյանցն առաջին անգամ հանդիպեց Հ.Այվագովսկուն: Բախչիսարայ այցելությունից հետո արված իր նկարների համար սպագա նկարիչն արժանացավ Այվագովսկու գովեստի խոսքերին և ներկեր նվեր ստացավ՝ Մոտ երեսուն տարի անց Վ.Սուրենյանցը նկարագարդեց Ալ. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմը և նվիրեց այն Հովհաննես Այվագովսկուն:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու **Անահիտ Բեքարյանի** զեկուցումը նվիրված է Հ.Այվագովսկու և Մխիթարյանների առնչություններին. 1840-ի հուլիսին Հ.Այվագովսկին մեկնում է Իտալիա՝ այցելությունն սկսելով Վենետիկից. Ս. Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանությունում ապրում և աշխատում էր նրա ավագ եղբայրը՝ 28-ամյա Գաբրիելը, ում նկարիչը չէր տեսել 14 տարի: Բանախոսն անդրադարձավ Հ. Այվագովսկու հետաքրքրությանը Մխիթարյան միաբանության թանգարանում պահվող նկարագարված աղոթագրքերի, բարձրարվեստ մանրանկարներով հարուստ և արժեքավոր հայկական հին ձեռագրերի նկատմամբ, նրա այն կտավներին, որտեղ պատկերված են Վենետիկը, Ս. Ղազար կղզին և Մխիթարյան հայրերը, վերլուծեց «Բայրոնի այցը Մխիթարյաններին Սբ. Ղազար կղզում» նկարի ստեղծման շարժառիթները:

«Ի.Կ.Այվագովսկու ստեղծագործությունը կինովավերագրողների աչքերով» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Արսեն Համբարձումովը** քննության առավ «Այվագովսկի» (1994), «Այվագովսկու էֆեկտը» (2016) և «Այվագովսկի. Ծովի ալիքի վրա» (2017) վավերագրական ֆիլմերը:

Խ.Արքովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու **Սաթենիկ Մելիքյանը** հանդես եկավ ««Ճովափնյա Հայաստանի» մեծանուն վարպետը» զեկուցմամբ:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մերի Կիրակոսյանի** զեկուցումը նվիրված է 1903 թվականին Ս.Պետերբուրգում հրատարակված Հովհաննես Այվազովսկու հիշատակին նվիրված գեղարվեստական ալբոմին, որի նախաձեռնողներն էին գեղանկարիչ Դավիթ Օքրոյանը և կոմպոզիտոր Եղիշե Բաղդասարյանը: Բանախոսը քննության առավ Լեոյի «Հովհաննես Այվազովսկու կյանքը և գործունեությունը», Գ.Օքրոյանցի «Ռուսական գեղարվեստը XIX դարում», Ե.Բաղդասարյանցի «Երգ և ռոմանս XIX դարում», Ղ. ք. Հովսեփյանի «Յուշիկներ հայկական երգեցողությունից» հոդվածները, Այվազովսկուն նվիրված Հ.Թումանյանի և Ա.Ծատուրյանի ստեղծագործությունները, անդրադարձավ պատկերագրքի երաժշտական հատվածում ներառված նոտային օրինակներին. Հ.Այվազովսկու հիշատակին նվիրված ռուս անվանի կոմպոզիտորներ Յեգար Կյուլիի «Ի.Կ.Այվազովսկու հիշատակին» (1902) և Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի «Песенка» (1901) ստեղծագործություններին:

Վ.Բրյուսովի անվան լեզվագիտական համալսարանի դասախոս **Նինա Հայրապետյանը** հանդես եկավ «Այվազովսկու ստեղծագործությունը և ծովի թեման ռոմանտիզմի դարաշրջանի գրականության մեջ» բանախոսությամբ:

Գիտական նստաշրջանի աշխատանքները եզրափակեց տողերիս հեղինակի «Հովհաննես Այվազովսկին և հայ երաժիշտները» զեկուցումը, որտեղ անդրադարձա Թիֆլիսում հրատարակվող “Кавказский вестник” գիտական-գեղարվեստական ամսագրի 1900թ. մայիսյան համարում տպագրված “Иван Константинович Айвазовский” ծավալուն հոդվածին՝ նկարչի յուրօրինակ մահախոսականին, որի հեղինակն էր երաժշտագետ, երաժշտական-հասարակական գործիչ, հրապարակախոս Վասիլի Կորգանովը (Բարսեղ Դորդանյան) և բացահայտեցի, որ հոդվածի բնաբանը՝

“Кисть вдохновенная упала  
Из рук великого творца.  
Могучий царь морской стихии  
И моря пламенный поэт  
Угас, и волны голубые  
Поют прощальный свой привет”.

բանաստեղծությունը, որի հիման վրա 1902-ին ռուս կոմպոզիտոր Յեգար Կյուլին գրեց «Ի.Կ.Այվազովսկու հիշատակին» ռեքվիեմը, հեղինակել է հենց Դորդանյանը: Այվազովսկիագիտության մեջ Դորդանյանի սույն՝ ոչ այնքան լայն շրջանառություն գտած հոդվածը կարևորվում է նաև նրանով, որ սրանում բերված կենսագրական տվյալները վերցված են Այվազովսկու տիկնոջ՝ Աննա Բուռնազյանի քրոջ ամուսնու, ծագումով հույն գրող Սպիրիդոն Կաշիոնիի հետ մեծ նկարչի գրույցը ներկայացնող հոդվածից, որտեղ նկարիչը ձևակերպում է իր գեղագիտական հայացքներն ու սկզբունքները: Ձեկուցման մեջ անդրադարձ արվեց այն մեծ դերին, որն ունեցել է Հ.Այվազովսկին հայ երաժիշտների՝ ջութակահար Հովհաննես Նալբանդյանի, երգիչ Բեգլար Ամիրջանյանի և կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործական ճակատագրում. ի դեպ՝ կոմպոզիտորը Այվազովսկուն է նվիրել իր «Կրիմի Էսքիզների» առաջին սյուիտը (1903):

Առաջիկայում լույս կտեսնի գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածուն:

**ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր